**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 12-ը մարտ 2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ԹԿ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան, (ԳԱՊ)

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության հրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպարտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ոսկանյան

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ա. Նիկոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

Նիստից բացակայում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ. Բաղդասարյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7» ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ. Բաղդասարյան)

1.1 Մասնակցի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: «Վարբադ» ՍՊԸ, «Մոսէսքո» ՍՊԸ, «Ժակ և Գոռ» ՍՊԸ և «Ավտոֆան» ՍՊԸ-ընկերությունների կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ մասնավորապես՝

- **«Վարբադ»** ՍՊԸ կողմից հավելված 6.1 ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթություն դաշտը.
- **«Մոսէսքո» ՍՊԸ** կողմից հավելված 6.1 ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթություն դաշտը.
- **«Ժակ և Գոռ» ՍՊԸ** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, տեխնիկական բնութագիրը թերի է՝ բացակայում է ռետինի ծավալի փոփոխության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև առկա են

տարբերություններ, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի անվանման և ՏԴ-ի մեջ /առակ է մասնագիտական եզրակացություն/.

- **«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, տեխնիկական բնութագիրը թերի է՝ բացակայում են փաթեթավորման և տարողության մասին տվյալները, ինչպես նաև բացակայում են նմանատիպ պայմանագրի հաշիվ-ապրանքագրերը:

Գնահատող հանձնաժողովը 12.03.2018թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակիցներին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում անհամապատասխանության շտկումները ներկայացվել են մասնակիցների կողմից և գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել «Վարբադ» ՍՊԸ, «Մոսէսքո» ՍՊԸ և «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ընկերությունների հայտերը: «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված անհամապատասխանության շտկումում շտկված չէ եղել առաջարկվող ապրանքի անվանման և ՏԴ-ի մեջ եղած տարբերությունը ուստի գնահատող հանձաժողովը մերժեց «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հայտը: Քանի որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն առաջին տեղ էր զբաղեցրել 12-րդ չափաբաժնի մասով և այդ նշված չափաբաժնի մասով առակ է այլ առաջարկներ որոնք գերազանցում են այդ գնումը կատարելու համար պլանավորված ֆինանսական միջոցները գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գնի նվազեցման նպատակով 14.03.2018թ. ծանուցվեց մասնակիցներին միաժամանակյա բանակցությունների մասին: 17.03.2018թ. բանակցության նիստին 12-րդ չափաբաժնի մասով մասնակիցները իրենց գնային առաջարկները թողել են ամփոփոխ ուստի գնահատող հանձնաժողովը համաձայն ՀՀ <Գնումների մասին> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի վերոնշյալ չափաբաժինները հայտարարեց չկայացած: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է նաև բանկային երաշխիքի բնօրինակը:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, որը ներկայացվել է 08.02.2018թ. մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 17.03.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից և վերջիններիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ. Բաղդասարյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ **4**, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Կ. Մխիթարյան |
| **Գնահատող** | Գ. Ռուստյան |
| **Գնահատող** | Ս. Նիկոյան |
| **Գնահատող** | Կ. Բրուտյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ. Բաղդասարյան |